ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

«-----» Ապրիլի 2012թ. N-Ա

ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՐՏԻՍՏ ԳԵՎՈՐԳ ԱՇՈՒՂՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի օգոստոսի 31-ի «Հայաստանի Հանրապետությունում պետական և հասարակական նշանավոր գործիչներին նվիրված հուշարձանների իրականացման կարգը հաստատելու մասին» N 551 որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետը՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

Տալ համաձայնություն Հայաստանի Հանրապետության Ժողովրդական արտիստ, ԽՍՀՄ Պետական մրցանակի դափնեկիր Գևորգ Աշուղյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Մ. Մաշտոցի պողոտա - 48 հասցեում տեղադրելու համար։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ – ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՐՏԻՍՏ ԳԵՎՈՐԳ ԱՇՈՒՂՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Որոշման համար հիմք է հանդիսանում Հայաստանի թատերական գործիչների միավորման 2012թ. փետրվարի 8-ի գրություն-միջնորդագիրը, ինչպես նաև Գևորգ Աշուղյանի ներդրած ավանդը հայկական թատերարվեստում:

Գևորգ Աշուղյանը ծնվել է 1911 թվականի հունվարի 5-ին Թիֆլիսում, որտեղ էլ ստացել է միջնակարգ կրթություն:

1927 թվականից սովորել է Թիֆլիսի հայ դրամային կից թատերական ստուդիայում՝ Արշակ Բուրջալյանի ղեկավարությամբ:

1929 թվականին Գ.Աշուղյանն ավարտել է ստուդիան և աշխատանքի անցել տեղի հայ դրամայի թատրոնում:

1935 թվականին երիտասարդ դերասանը մեկնել է Մոսկվա և իր մասնագիտական կրթությունը շարունակել հայկական կուլտուրայի տանը կից, Ռուբեն Սիմոնովի ղեկավարությամբ գործող, դրամատիկական ստուդիայում:

1937 թվականին ավարտելով ուսումը վերադարձել է ծննդավայր:

1939 թվականին երիտասարդ դերասանին հրավիրում են Երևան՝ «Հայֆիլմ» կինոստուդիայում աշխատելու համար:

Նա ՀՀ ժողովրդական արտիստ էր, ԽՍՀՄ պետական մրցանակի դափնեկիր:

Գևորգ Աշուղյանը երկար տարիներ աշխատել է Երևանի Գաբրիել Սունդուկյանի անվան պետական ակադեմիական թատրոնում:

Գևորգ Աշուղյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի պատվիրման և տեղադրման ծախսերն իրականացվելու են Երևանի քաղաքապետարանի ֆինանսական միջոցներով:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՐՏԻՍՏ ԳԵՎՈՐԳ ԱՇՈՒՂՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ/ԿԱՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Հայաստանի Հանրապետության Ժողովրդական արտիստ Գևորգ Աշուղյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերում լրացումներ և/կամ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՐՏԻՍՏ ԳԵՎՈՐԳ ԱՇՈՒՂՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ/ԿԱՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Հայաստանի Հանրապետության Ժողովրդական արտիստ Գևորգ Աշուղյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում լրացումներ և/կամ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ